

ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՇԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Խոսքն իրենից ներկայացնում է բարդ կառույց, որտեղ առկա բազմաթիվ արտալեզվական գործոնների ազդեցությունը հանգեցնում է արտահայտման յուրօրինակ ձևերի: Քանի որ խոսքի ոճավորումն իրականանում է արտալեզվական գործոնների հիմքի վրա և դրանց ազդեցության ներքո, իսկ այդպիսի գործոնները և խոսքային տարատեսակները շատ են, առաջանում է խոսքի ոճական դասակարգման անհրաժեշտություն, դասակարգում, որն իրականացվում է ոճը պայմանավորող գործոնների որոշարկմամբ և ոճական աստիճանակարգությունը պարզաբանելու ճանապարհով: Մարդկային լեզվի բնական նյութն իր ամբողջության մեջ, ձևերի ու տեսակների հարստությամբ քննության առնելու ձգտումը լեզվաբաններին մղել է ստեղծելու գործառական ոճերի լայն և մանրամասն ցանկեր: Ոճական այդօրինակ դասակարգումները գիտական մեծ արժեք ունեն և կարևոր ներդրում են լեզվագիտության մեջ, քանի որ դրանք ոչ միայն նպաստում են գործառական ուսումնասիրությունների զարգացմանը, այլև լայն առումով՝ բարձրացնում լեզվի ընդհանուր իմացության և խոսքային հաղորդակցման մակարդակը:¹

Հարկ է նշել, որ անցյալ տասնամյակների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել վերոհիշյալ ոճա-խոսքային քառսը կանոնակարգելու ուղղությամբ: Հաշվի առնելով ոճը պայմանավորող ներքին ու արտաքին գործոնների կարևորության աստիճանը՝ տարբերակվել են հիմնական և ոչ հիմնական խմբեր: Նշվել են օբյեկտիվ գործոններ (հասարակական գիտակցության ձևը, ստեղծագործական մտքի բնույթը, բովանդակությունը, թեման, ենթաոճային երանգավորումը և այլն), որոնք ունեն իրենց արտահայտման ձևերը՝ բանավոր, գրավոր, մենախոսություն, երկխոսություն, զանգվածային հաղորդակցման, ժանրային (ակնարկ, պատմվածք, վեպ, մենագրություն, դասագիրք, հոդված,

¹ Микоян А.С., Тер-Минасова, С.Г., Малый синтаксис как средство разграничения стилей. М., 1981.

դասախոսություն, քննարկում, ժողով) և այլ ձևեր: Կարևորվել են նաև տարաբնույթ արտալեզվական գործոններ՝ սոցիալական, հոգեբանական, ֆիզիոլոգիական, ինչպես օրինակ մասնագիտություն, կրթություն, տարիք, սեռ և անհատական, ինչպես օրինակ հաղորդակցման անձնական նպատակը, տրամադրությունը խոսելու պահին, խոսակցի նկատմամբ վերաբերմունքը և այլն, որոնք կապված չեն լեզվի բնույթի և խոսքի արտահայտման ձևերի հետ: Ընդ որում նշված բոլոր գործոնները ենթակա են լեզվական համակարգերի գործունեության օրենքների ազդեցությանը:¹

Լեզվի գործառական ոճերի բաժանման և դասակարգման հարցերը միշտ չէ, որ միանշանակ լուծում են գտնում, հատկապես երբ դրանք քննարկվում են լեզու/խոսք հասկացությունների հարաբերակցության տեսանկյունից: Ք. Բյուլերը, օրինակ, առաջին հետազոտողներից էր, որ խոսքային ակտում կարևորում էր լեզվի գործառության նպատակայնությունը՝ խոսքային ակտի իրացումը կապելով երեք կարևոր կողմերի (խոսող, լսող և հաղորդվող տեղեկություն) հետ: Այս երեք հայեցակետերը ենթադրում են լեզվի երեք անհրաժեշտ գործառույթները՝ նկարագրության կամ ներկայացման գործառույթ (Darstellung), արտահայտման գործառույթ (Ausdruck) և դիմելու կամ հաղորդման գործառույթ (Appel),² ըստ որոնց էլ կարող է քննվել լեզվական ցանկացած երևույթ: Գործառույթների տարանջատման բյուլերյան սխեման հետագայում ընդլայնվեց նշանի հասկացությամբ, որը ներմուծվեց Յան Մուկարժովսկու կողմից որպես խոսքային ակտի կարևոր բաղադրիչ:³ Հետագայում հետազոտողն այս հասկացությունը կապեց գեղագիտական գործառույթի հետ, որն էլ իր էությամբ հակադրվում էր բյուլերյան գործնական գործառույթներին: Ռ. Յակոբսոնը վերոհիշյալ համակարգին ավելացրեց նաև երկու կարևոր հասկացություն. համատեքստ, որի շրջանակներում տեղի է ունենում հաղորդակցումը և հասցեագրողի ու հասցեատիրոջ համար ընդհանուր լեզու (code):⁴

¹ Кожина М.Н., К основаниям функциональной стилистики. Пермь, 1968.

² Bühler Karl, Sprachtheorie. Jena, 1934.

³ Mukarovsky Jan, *The Studies of Poetic Designation. The Words and Verbal Art*. New Haven and London 1977.

⁴ Jakobson R *Closing Statement: Linguistics and Poetics* London, 1961.

Այդուհանդերձ գործառական վերլուծությունները ճնշող մեծամասնությամբ ելնում են ակադեմիկոս Վ.Վ. Վինոգրադովի այն տեսությունից, որ լեզվի ամենակարևոր հասարակական՝ հաղորդակցման (Сոобща́ция), հաղորդման (сообщение) և ներգործման (воздействие) գործառույթները կարող են ընդհանուր առմամբ հիմնարար հանդիսանալ լեզվական կառույցների և ոճերի համար:¹

Արտահայտելով իրենց համաձայնությունը Վ.Վ. Վինոգրադովի հետ և հաղորդակցման գործառույթը հիմնարար համարելով մարդկային ցանկացած խոսքային գործունեության համար, շատ լեզվաբաններ խոսքի գործառույթների համակարգում առավելապես կարևորում են հաղորդման և ներգործման գործառույթները, (Ogden S.K., Richards I.A., 1936; Тезисы Пражского лингвистического кружка. 1967; Балли Ш., 1961; Halliday M. A. K., 1971; Кожина М.Н., 1972; Жирмунский В.М., 1977; Будагов Р. А., 1981; Лебедев Е. Б., 1983; Разинкина Н.М., 1989; Smith B., 1987; Арнольд И.В., 1990; Чаковская М.С., 1990; Chloupek J., 1993; Bendixen A., 1997; Blair J., 1997; Гаспарян С.К., 2000) որոնց համապատասխան հիմնականում առանձնացվում են հետևյալ գործառական ոճերը՝ գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական, պաշտոնական-գործնական, առօրյակենցաղային:²

Զնայած նշված տարանջատմանը, գործառական ոճերն իրական խոսքային պրոցեսում չեն կարող դրսևորել լիովին և բացարձակ մեկուսի գործածություն: Գործառական ոճերի այսօրինակ հստակ սահմանազատումը առավելապես հետապնդում է տեսական նպատակներ, քանի որ որքան էլ էապես տարբեր ու հակադիր լինեն, իրական խոսքում դրանք հաճախ փոխներթափանցվում են:

Ակնհայտ է, որ լեզվաբանական ուսումնասիրություններում հիմնական ուշադրությունը նվիրվում է երկու կարևորագույն գործառական ոճերին՝ գիտական և գեղարվեստական, սակայն հասարակական-քաղաքական հարաբերությունների զարգացման ժամանակակից ընթացքը բերել է այլ ոճաձևերի կարևորմանը և դրանց հետազոտական քննության անհրաժեշտությանը: Մասնավորա-

¹ Виноградов В.В., Стилистика. Теория поэтической речи. Поэтика. М., 1963.

² Чаковская М.С., Текст как сообщение и воздействие. М., 1996.

պես հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում հրապարակախոսական ոճը, որը ոճերի տեսության մեջ ներկայացվում է կամ լրագրային ոճի հետ միավորված (Гвоздев А.Н., 1965, Кожина М.Н., 1968, Баскаков Н.А., 1983, Туманян Э.Г., 1985 Շգեկյան Լ.Կ., 1999), կամ լրագրային ոճից առանձնացված (Разинкина Н.М., 1989) և կամ որպես երրորդ հիմնական ոճ (Josselson Н., 1953, Арнольд И.В., 1990): Ինչպես ցույց է տալիս մեր քննությունը, հրապարակախոսական ոճը մի կողմից ծագում է դեպի արտահայտչականություն, մյուս կողմից՝ դեպի տրամաբանականություն, մի կողմից հակադրվում է վերոհիշյալ երկու ոճերին (գեղարվեստական և գիտական), մյուս կողմից ունի ակնհայտ ընդհանրություններ դրանց հետ:

Թեև ոճական դասակարգումների բազմազանության մեջ հրապարակախոսական ոճը հայտնվում է տարբեր դիրքերում, սակայն ընդհանուր առմամբ այդ համակարգում այն ունի իր կայուն, որոշակի տեղը: Որոշ տեսաբաններ այն ավելի մոտ են տեսնում գեղարվեստական ոճին, որոշ չափով անտեսելով հաղորդման գործառույթի կարևորությունը, ուրիշներն ընկալում են այն որպես գիտական խոսքին հարող ոճածա՝ անուշադրության մատնելով հրապարակախոսական ոճում կենսականորեն անհրաժեշտ ներգործման գործառույթի դերը: Մեր ուսումնասիրության մեջ ելնում ենք այն դրույթից, որ հրապարակախոսական գործառական ոճը գոյաբանորեն իսկ կապված է հաղորդման և ներգործման գործառույթների հետ, որոնց դիալեկտիկական հակադրամիասնությունն ուղղված է լուծելու որոշակի հասարակական խնդիրներ և ըստ էության պետք է դիտարկվի որպես հասարակական գիտակցության ուրույն ձև:

Ժանրային բազմազանությունը և կառուցվածքային նոր ժանրերի առաջացումը օրինաչափորեն նպաստում են հրապարակախոսական ոճի կայացմանը: Ժանրային շարժունության միտումը հրապարակախոսական ոճը դարձնում է հարաշարժ պատմական զարգացման բոլոր շրջաններում: Ժանրերի մի մասը այդ ընթացքում փոխում է իր բնույթը (ճանապարհորդական գրառումներ) կամ դառնում գրեթե կանոնարկված տվյալ ոճի համար (պատմական փաստագրություն): Գործառական ոճական նպատակաուղղվածությունը հանդես է գալիս բոլոր ժանրերում, հրապարախոսական ոճը դարձնելով ստանդարտ դրանց բոլորի համար: Դրապարակախոսական արձակի գործառական ոճի կարևորա-

գույն կատեգորիաները (հրապարակախոսական-հասարակական, անհատական-հեղինակային, պատմողական-բանավիճային-քննադատական), ներկայանում են որպես լեզվական միջոցների այնպիսի ամբողջություն, որը բնորոշ է հրապարակախոսական արձակի բոլոր ժանրերին: Առավել քան երբևէ անգլերեն հրապարակախոսական հասարակական-քաղաքական գրականությունն այժմ չափազանց բազմազան է: Ի հայտ են եկել հասարակական խնդիրների լուծմանն ուղղված հրապարակախոսական բնույթի բազմաթիվ նոր ժանրեր, որոնցում օրինաչափորեն օգտագործվում են հրապարակախոսական ռճադորձառական տարրեր:

Իր գոյության ընթացքում անգլերենի հրապարակախոսական ռճն օգտվել է ընդհանուր գրական լեզվից: Գրական լեզվի տարրերի օգտագործումը հրապարակախոսական ռճում հասարակական, քաղաքական սոցիալական, մշակութային երևույթներ արտահայտելու և պատկերելու համար նախ և առաջ խթանում է այդ ռճի զարգացումը, որն իր հերթին ընդլայնում և փոխում է գրական լեզվի բառապաշարը, ստեղծում նոր բառեր և հասկացություններ: Այդ գործընթացն արտահայտվում է ոչ միայն նոր բառապաշարի ստեղծմամբ, այլև գոյություն ունեցող ձևերի հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական փոփոխություններով, որոնք ծառայում են արտահայտելու հասարակական-քաղաքական կյանքում հաստատվող նոր հարաբերություններ, երևույթներ, հնարավորություններ, դիտարկումներ, տեսակետներ, կանխատեսումներ անգլերեն լեզու ներմուծելով որոշակիություն, ճշգրտություն և միևնույն ժամանակ պատկերավորություն: Անգլերեն գրական լեզու են թափանցում հրապարակախոսական խոսքին բնորոշ հատուկ ձևեր՝ սկսած բառ - եզրույթներից (reform, orientation, verdict, escalation, intervention, heresy, liquidation, legalize, liberate, fabricate, dynamically, autocrat, functionary, sabotage, base, veto, jurisdiction, statute, intervention, protectorate, demographic, neutrality), վերջացած դարձվածաբանական (give full reign, the case in point, swim against the tide, stab in the back, welcome to the club, sign the death warrant, carry a big stick, a name to conjure with, fight a losing battle), շարահյուսական (unimaginable wickedness, fatal tendency, vehement opposition, bizzare abuse, extreme polarization, the greatest possible flexibility, have sufficient ground to

assume that, place the faith in, build on the conviction that, rooted in virtues, joust and argue over material inheritance, sympathetic to aspirations, shock the international conscience, doomed to perish), կառուցվածքային (ill- gotten gains, once in a lifetime chance, grab and go guys, appear-at-night people, comeatable truth, get-rich-fast leaders, the-sun-never-sets-on-British-Empire mentality) յուրահատուկ ձևերով:

Այսպես, եթե մի ժամանակ գրական անգլերենի հարստացման աղբյուր էր դիտվում գեղարվեստական գրականությունը կամ գիտական արձակը, ապա վերջին 20-25 տարիների ընթացքում տեղի ունեցած տեղաշարժի արդյունքում այդ դերը կատարում է հրապարակախոսական արձակը: Զափազանցություն չի լինի ասել, որ հրապարակախոսական արձակը այժմ դարձել է անգլերեն լեզուն հարստացնելու կարևորագույն միջոց և մեծապես ազդում է ընդհանրապես անգլերեն լեզվի ժողովրդավարացման գործընթացի վրա: Անգլերեն լեզվի համակարգում այն այժմ գրավում է այնքան կայուն, այնքան որոշակի և այնքան կարևոր տեղ, որ կարողանում է լեզուն կողմնորոշել դեպի համա-մարդկային սոցիալական հիմքը, որն էլ ժամանակակից գրական անգլերենում առաջացնում է ոճական չեզոքության հակում, մի հատկանիշ, որը նախկինում բնորոշ էր միայն գիտական շարադրանքի ոճին: Ինչպես ցույց է տալիս մեր լեզվական նյութի քննությունը, հրապարակախոսական արձակը հաճախ աչքի է ընկնում պատմողական-քննադատական-բանավիճային շարադրանքով, որի հիմնական առանձնահատկություններից է շարադրանքի օբյեկտիվությունը: Այսպես

"We shape our dwellings, and afterwards our dwellings shape us." (Winston Churchill)

"A traditional British house is built to stand the test of time. It is almost always brick but can be made of stone or concrete. Houses hundred of years old and a few buildings thousands of years old are still standing and functioning in their original capacity. These houses were neither built overnight nor meant to last just a short time. Much of the essence of Britain and her people can be sensed from the fortitude and long-lasting style of their buildings. Like the British people, there are no surprises in their traditional house. They are all based on the same tried-

and-tested design. They are unchanging except for some slow chipping away or eventual weathering over the years. There is only one "right" way to do things, and most, if not all citizens know what it is – no one has to be told. Putting up a very modern California-style wood house with an open and unusual floor plan surely does not meet this need. Some Britons would derisively term this type of house "ticky tacky", and a true British family would hesitate to rely on such methods for such a serious business as building a home."

(Martin J. Gannon "Understanding Global Cultures".p.19)

Բերված համատեքստը ցույց է տալիս, որ հենց առաջին տողում Ու. Չերչիլի խոսքը մեջբերելով հեղինակն արդեն իսկ փորձում է հաստատել իր շարադրանքի օբյեկտիվությունը: Հաջորդող փաստարկները ներկայացնում են մեջբերման առաջին մասում նշված (we shape our dwellings) արտահայտության բացատրությունը, տրամադրելով ընթերցողին, որ օբյեկտիվ փաստարկներին հետևելու են մեջբերման երկրորդ մասին (afterwards our dwellings shape us) ուղղված սուբյեկտիվ բացատրություններ: Օբյեկտիվությունը (It is almost always brick but can be made of stone or concrete. Houses hundred of years old and a few buildings thousands of years old are still standing and functioning in their original capacity. These houses were neither built overnight nor meant to last just a short time.), հիմնված է բրիտանական ավանդական տան կառուցվածքն ու ամրությունը փաստող ապացույցների վրա, որոնք էլ մտազուգորդվում են ազգային սովորույթների և մտածելակերպի յուրահատկությունների հետ: (Much of the essence of Britain and her people can be sensed from the fortitude and long-lasting style of their buildings. Like the British people, there are no surprises in their traditional house. There is only one "right" way to do things, and most, if not all citizens know what it is – no one has to be told.): Այնուամենայնիվ հեղինակի մտքի օբյեկտիվությունը երբեք չի հասնում անալայմանականության (կատեգորիկություն), քանի որ հրապարակախոսական օբյեկտիվության և սուբյեկտիվության միջև ոչ մի դեպքում չկա կոնկրետ սահման: Որպես այդ ոճում կարևոր հատկանիշ հարկ է նշել օբյեկտիվության և սուբյեկտիվության համադրումը, որի դեպքում սուբյեկտիվը հարմարեցվում է ներկայացվող օբյեկտիվ նյութին: Այս փոխկապվածությունն արտահայտվում է

ճանաչողության բոլոր մակարդակներում, ներառյալ լեզվական որոշակի միջոցների ընտրությունը (traditional house, to stand the test of time, brick, stone or concrete, to stand and function, to be built overnight, the essence of Britain, to be sensed from, fortitude, long-lasting style, to be based on, tried-and-tested design, unchanging, derisively, to term, "ticky tacky", a true British family, to rely on, methods, a serious business as building a home) հատուկ հրապարակախոսական շարադրանք ստեղծելու համար: Սուբյեկտիվության և օբյեկտիվության բենեֆայնությունը հիմնված է հաղորդման և ներգործման գործառույթներն իրացնող լեզվական վերոհիշյալ տարրերի վրա: Մի կողմից անհրաժեշտ է ապահովել հրապարակախոսական հաղորդման լիարժեքություն, ճշգրտություն, տրամաբանականություն, մյուս կողմից՝ հեղինակային վերաբերմունք:

Հիմնականում ընթերցողի վրա հուզական ազդեցություն թողնելու և խոսքային կապ ստեղծելու հեղինակի անհատական ձգտումը տանում են դեպի հեղինակային «եսի» ազատ օգտագործում և ստեղծում շարադրանքի մտերմականություն, այսինքն ընթերցողի և հեղինակի հետաքրքրությունների սերտացում: Հեղինակային դերի կարևորումը հրապարակախոսական արձակի ոճի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է: Ի տարբերություն գեղարվեստական շարադրանքի, այստեղ հեղինակը համդես է գալիս ոչ թե որպես հեղինակի կերպար, այլ որպես անհատականություն, որը նպատակադրված է դիտարկել, նկարագրել, ապացուցել, քարոզել որոշակի գաղափարներ, լուսաբանել հասարակական այս կամ այն երևույթ, ներկայացնել սուբյեկտիվ դատողությունների և օբյեկտիվ իրականության փոխհարաբերությունը: Հեղինակային խոսքն ի գորու է այնքան ընդգծված արտահայտել հրապարակախոսական ոճի յուրօրինակությունը, որ վերջինս, թերևս կարելի է որակել որպես հեղինակային վառ անհատականության ոճ:¹

Իր ձևավորման ժամանակաշրջանից մինչև այժմ անգլերեն հրապարակախոսական արձակի ոճը զարգանում և դրսևորվում է որպես անգլերեն լեզվի կարևոր անբաժանելի մաս: Նպատակաուղղվածությամբ, ժանրային բազմազանությամբ, հասարակության լայն շրջանների համար մատչելիությամբ և

¹ <http://www.salsem.ac.at/scaci/progs/genre> Bendixen, Alfred: 1997

հեղինակային մեծ մասնակցությամբ աչքի ընկնող անգլերեն հրապարակախոսական արձակի ոճի գոյությունն ու զարգացումը որպես պատմական կարգ, պայմանավորված է՝ անգլերեն գրական լեզվի զարգացման ընթացքով, անգլերեն լեզվով գիտական, տեղեկատվական, մշակութային, սոցիալ-հասարակական մտքի զարգացմամբ, հեղինակային խոսքի վարպետությամբ և այն հասարակության մտածողական մակարդակով, որին ուղղված է տվյալ շարադրանքը:¹

Ոճական ընդհանուր դասակարգումը ցույց է տալիս, որ ինչպես մյուս գործառական ոճերի, այնպես էլ հրապարակախոսական արձակի ոճի ուսումնասիրությունն անհնարին է առանց տեղեկատվական և հուզարտահայտչական խոսքային տարրերի ու հատկանիշների ուսումնասիրության և պարզաբանման, որ հրապարակախոսական ստեղծագործությունների վերլուծությունն օգնում է բացահայտել հաղորդման և ներգործման գործառույթների հարաբերակցությունը, քանի որ հենց հրապարակախոսական ոճն է, որ մի կողմից ներկայացնում է հարուստ բանասիրական, իրավաբանական, պատմական, սոցիալական, մշակութային, քաղաքական կարևոր նյութ, մյուս կողմից իրականացնում է ընթերցողի վրա ներգործելու նպատակ: Ընդ որում, վերջինիս շնորհիվ է, որ հրապարակախոսական ոճը դուրս է բերվում հաղորդման գործառույթի տրամաբանական կայունության շրջանակներից, ձեռք բերում հուզագնահատողական նրբերանգներ: Հրապարակախոսական արձակը հաղորդման և ներգործման գործառույթների յուրօրինակ համաձուլվածք է և միջակա դիրք է գրավում գեղարվեստական և ոչ գեղարվեստական ոճերի միջև:

¹ Функциональный стиль общенаучного языка и методы его исследования. Ред. — и О.С. Ахманова и М.М. Глушко. М., 1960.